ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Լրացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտական աշխատող, պատմական գիտությունների դոկտոր, վաստակաշատ պատմաբան Վրեժ Վարդանյանի ծննդյան 85-ամյակը: Վ. Վարդանյանը ծնվել է 1931 թ. հոկտեմբերի 10-ին ՀԽՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Այգեշատ գյուղում: 1954 թ. ավարտելով նույն շրջանի Արմավիր գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1958–1962 թթ. աշխատել է Հոկտեմբերյանի շրջանի Տանձուտ գյուղի միջնակարգ դպրոցում:

1962 թ. Վ. Վարդանյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո՝ 1966 թ., պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը» թեմայով: Գիտական ոլորտումների շրջանը նրա կյանքում սկիզբ է առել 1963 թ.: Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հոդվածների ժողովածու»-ում (- 1) տեղ է գտել նաև նրա անդրանիկ հոդվածը՝ «Վասպուրականը Արծրունյաց թագավորության առաջացման նախօրյակին» վերտառությամբ:

1966–1982 թթ. Վ. Վարդանյանն աշխատել է Հայկական խորհրդային հանրագիտարանի գիտական խմբագրությունում, նախ որպես գիտական խմբագիր, ապա՝ Հայ ժողովրդի պատմության, հնագիտության և ազգագրության գիտական խմբագրության վարիչ: 1982–1984 թթ. աշխատել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունում որպես ավագ գիտաշխատող: 1984–1990 թթ. աշխատել է Հայաստանի ԳԱ նա-

խագահությունում՝ որպես հասարակական գիտությունների գծով համակարգող խորհրդի գիտական քարտուղար: Վ. Վարդանյանը 1991 թ. հունվարից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնում՝ նախ որպես ավագ գիտաշխատող, իսկ 2015 թ. առ այսօր՝ գլխավոր գիտաշխատող:

*Վ. Վարդանյանի գիտական հետաքրքրությունները հիմնականում բևեռված էին Վասպուրականի պատմության վրա: 1969 թ. լույս է տեսնում նրա առաջին մենագրությունը՝ «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը», որտեղ հարուստ աղբյուրագիտական հենքի վրա լուսաբանվում են այդ թագավորության քաղաքական պատմությունը, նրանում տեղի ունեցած հասարակական և մշակութային տեղաշարժերը, տնտեսական վիճակը, սելջուկ-թուրքերի հարձակումները և Բյուզանդիայի նենգ քաղաքականությունը, 1021 թ. Վասպուրականի թագավորության վերացումը, նրա բնակչության զգալի մասի արտագաղթն ու այլ խնդիրներ: Այնուհետև լույս են տեսնում տարաբնույթ բովանդակությամբ նրա բազմաթիվ հոդվածները տարբեր ամսագրերում և հանդեսներում («Պատմաբանասիրական հանդեսի», ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Երևանի համալսարանի», Մաշտոցի անվան Մատենադարանի «Աշտանակ» գիտական պարբերականի, «*Кавказ и Византия*» հանդեսի, «Էջմիածին» պարբերականի, «Բազմավէպի», «Հայկազեան հայագիտական հանդէսի» էջերում և այլ պարբերականներում): Հայկական հանրագիտարանում նրա գրչին են պատկանում բազմաթիվ հոդվածներ:*

1994 թ. Վարդանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Վասպուրականի հայկական պետության պատմության ուրվագծեր» թեմայով: Դրանում հետազոտված են վաղ միջնադարյան Վասպուրականի Հայոց նախարարական պետականության (VI–VII դարեր), Վասպուրական եզրույթի ծագման, երկրամասի քաղաքական ու կրոնական կացության, ինչպես նաև հետագա զարգացման խնդիրներն ու հարակից այլ հարցեր: Առանձին գլուխ է նվիրված Արաբական խալիֆայության գերիշխանության պայմաններում հայ նախարարների քաղաքական դիրքորոշմանը, իրենց ինքնավար իրավունքների համար մղած պայքարի, IX դ. կեսին Խալիֆայության դեմ երկրում ծավալված

ժողովրդա-ազատագրական պայքարի շնորհիվ Վասպուրականի ինքնուրույնության ընդլայնման հանգամանքներին: Վեր է հանվում Վասպուրականի թագավորության ստեղծման նախօրյակին (885–907 թթ.) երկրամասում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերի պատմությունը: Առանձին բաժին է հատկացված Վասպուրականում և հարակից գավառներում Արծրունիների թագավորության (908–1021 թթ.) պատմությանը: Հաջորդ բաժնում համակողմանիորեն հետազոտվում են այդ երկրամասի սոցիալ-տնտեսական հարաբերությունները՝ ավատատիրական համակարգի կառուցվածքը, հողատիրության ձևերը, վարչաաշխարհագրական կառուցվածքը, գյուղական բնակչության կացությունը, գյուղական համայնքների զարգացման ձևերը, հարկային հարաբերությունները, քաղաքների զարգացումը, առևտուրը և այլն:

Վ. Վարդանյանն առաջին անգամ գրաբարից թարգմանել է Թովմա Արծրունու և նրա Անանուն շարունակողի պատմագրքերը՝ դրանք օժտելով արժեքավոր ծանոթագրություններով (հրատարակվել է 1985 թ., զուգահեռաբար գրաբար բնագրով): Նա նաև հեղինակակից է 2002 թ. լույս տեսած «Հայոց պատմություն» համառոտ ձեռնարկի:

2002 թ. լույս է տեսել Վ. Վարդանյանի «Արծրունիները Հայոց պատմության մեջ» արժեքավոր ուսումնասիրությունը, որտեղ վեր է հանվում այդ ականավոր տոհմի ամբողջական պատմությունը: Հետազոտվում է տոհմի գործունեությունը վաղ միջնադարում, նրա հարաբերություններն Արշակունի և Բագրատունի Հայոց թագավորների հետ, Արծրունիների խաղացած դերը V և հետագա դարերի ազատագրական պատերազմներում, հարաբերություններն Արաբական խալիֆայության հետ, Արծրունիների՝ որպես Վասպուրականի լիիշխան տիրակալների գործունեությունը, Բագրատունիների հետ նրանց մերձեցման ու դաշինքի հանգամանքները և երկրամասի ինքնուրույնության համար մղած պայքարը:

Աշխատության մեջ պատկառելի տեղ է հատկացված 908 թ. Գագիկ Արծրունի իշխանապետի գլխավորությամբ Վասպուրականում ու հարևան գավառներում առանձին թագավորության հռչակմանը: Ներկայացվում են նաև 1021 թ. Վասպուրականից արտագաղթն ու Սեբաստիայի գավառում Արծրունիների ավատական իշխանության հիմնումը, բյուզանդական ծառայության

մեջ այդ տոհմի խաղացած դերը: Առանձին գլուխ է նվիրված նաև 1021 թ. հետո Վասպուրականում մնացած Արծրունիների գործունեությանը:

2005 թ. լույս է տեսել Վ. Վարդանյանի «Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» շահեկան մենագրությունը, որտեղ Հայոց Առաքելական եկեղեցին ներկայացված է որպես Հայաստանի պետականությունը մարմնավորողի, նրա հասարակական և բարեգործական առաքելությունը, ժողովրդին միավորողի և օտար պետությունների առջև նրա իրավունքների պաշտպանի գործունեությունը: Զգալի տեղ է հատկացված նաև ժողովրդաազատագրական պատերազմներում եկեղեցու մասնակցությանն ու հայրենանվեր առաքելությանը:

2008 թ. ընթերցողի սեղանին է դրվել Վարդանյանի՝ «Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ» ուսումնասիրությունը: Գրքում հանգամանորեն քննված են միջնադարյան Հայոց պատմության մեջ ականավոր դեր խաղացած Պահլավունիների անցած ուղու պատմարժան իրողությունները՝ ի մասնավորի, Հայաստանի անկախության, Հայոց Առաքելական եկեղեցու դավանական ինքնորոշման և անաղարտության պահպանմանն այդ տոհմի բերած նպաստը, նրա ականավոր ներկայացուցիչների ազգաշահ գործունեությունը և այլն:

Վ. Վարդանյանի՝ 2010 թ. հրատարակված «Գրիգոր Նարեկացին և հայրենի Վասպուրական աշխարհը» մենագրության մեջ արտացոլված են այդ մեծ մտածողի ու բանաստեղծի իմաստահեղ մտորումները ժամանակի ուշագրավ երևույթների՝ ավատատիրության, գյուղաշխարհի, արհեստագործության ու առևտրի, հարկային հարաբերությունների և այլնի վերաբերյալ:

Վ. Վարդանյանը մասնակցել է 2012 թ. Գյումրու քաղաքապետարանի հրապարակած «Գյումրի քաղաքը և մարդիկ» կոլեկտիվ ուսումնասիրության ստեղծմանը:

Վաստակաշատ պատմաբանին շնորհավորելով՝ մաղթում ենք քաջառողջություն և գիտական նորանոր ձեռքբերումներ:

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ